

1880–1890–ԱԿԱՆ ԹԹ. ՀԱՅ ՆԱՐՈՂՆԻԿՆԵՐՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ–ՆԱՐՈՂՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մաս երկրորդ: Նորահայտ վավերագրեր Աբրահամ
Դաստակյանի հեղափոխական գործունեության մասին*

Բանալի բառեր – «Նարողնայա Վոյա», «Հայրենասերների Միություն», Աբրահամ Դաստակյան, Շուշի, Թիֆլիս, Քրիստափոր Միքայելյան, ՀՅ Դաշնակցության Կենտրոն, Գրիգոր Արծրունու հուղարկավորություն, ամբաստանյալ, պատժամիջոց, ոստիկանության գաղտնի վերահսկողություն:

19-րդ դարի 70–80–ական թվականների հայ նարողնիկների և ազգային–նարողնիկական կազմակերպությունների գործունեության մասին մեր կողմից հայտնաբերված փաստաթղթերի փաթեթի շարունակությունն են կազմում 1890–ին ձևավորված ՀՅ Դաշնակցության առաջին ղեկավար մարմնի՝ Կենտրոնի կամ՝ Կենտրոնական Վարչության անդամ **Աբրահամ Դաստակյանի** հեղափոխական գործունեությանը վերաբերող նյութերը:

Դրանք լույս են սփռում 19-րդ դարի 80–ական թվականներին Մոսկվայի «Հայրենասերների Միության» ու գրեթե միաժամանակ՝ «Նարողնայա Վոյա» կազմակերպության շարքերում նրա ակտիվ գործունեության անհայտ էջերի վրա: Դեռևս 1880–ականների սկզբին Թիֆլիսում Ա. Դաստակյանն ու իր ընկերները, այդ թվում՝ Քր. Միքայելյանը, «գուգահեռ գործունեություն» էին ծավալել ինչպես ռուս հեղափոխական նարողնիկության շարքերում, այնպես էլ հայ ազգային–նարողնիկական կազմակերպությունների ներսում: Դա թույլ էր տալիս հայ ազգային–ազատագրական շարժման գործիչներին յուրացնել ռուսական նարողնիկության հեղափոխական պայքարի հարուստ փորձը:

Ա. Դաստակյանի մասին մեր կողմից հայտնաբերված արխիվային վավերագրերը վկայում են, որ նա երիտասարդ տարիներից սկսած ակտիվորեն մասնակցել է ռուս հեղափոխական նարողնիկության գործունեությանը՝ շատ հաճախ ունենալով բավականին լուրջ դերակատարում: Ուստի պատահական չէ, որ անգամ խորհրդային շրջանում կազմված «**Հեղափո**

*Հոդվածն ընդունվել է տպագրության 15.02.2019:

խական շարժման գործիչները Ռուսաստանում»¹ կենսամատենագիտական բառարանում մանրամասն անդրադարձ կա Ա. Դաստակյանին: Նրանում նշվում է, որ Ա. Դաստակյանը ծնվել է մոտ 1861 թ. Շուշի քաղաքում վաճառականի ընտանիքում: Սովորել է Շուշիի հայկական քաղաքային և հոգևոր ուսումնարաններում, իսկ այնուհետև Թիֆլիսի Ալեքսանդրյան ինստիտուտում: 1880-ականների սկզբին Թիֆլիսում ակտիվորեն մասնակցել է տեղի միասնական նարոդնիկական կազմակերպության գործունեությանը և ի թիվս այլ գործիչների, համարվում էր նրա աչքի ընկնող անդամներից մեկը²:

Այս կազմակերպության կենտրոնական ղեկավար խմբակին անդամակցում էին Հովհաննես Մանուչարյանը, Հովհաննես Լոռու-Մելիքյանը, Սիմոն և Սրապիոն Տեր-Գրիգորյանները, Թամարա Ադամյանը, Ա. Դաստակյանը և ուրիշներ: Յուրաքանչյուր անդամ միաժամանակ որևէ խմբակի ղեկավար էր: Կազմակերպությանը մաս կազմող հայ և վրացի երիտասարդները դեռևս չէին հետաքրքրվում տեղական խնդիրներով, սակայն 1880-ականների սկզբին ստեղծված նոր իրավիճակը նրանց ստիպեց վերանայել իրենց մտացունները:

Ազգային խառը կազմ ունեցող միասնական նարոդնիկական կազմակերպության պառակտման համար առիթ դարձավ 1881 թ. ձմռանը Օրթաձալայում՝ Էլիոզովի այգում կենտրոնից եկած մի հրահանգչի՝ Ա. Սեմյոնովի կարդացած զեկուցումը: Իր զեկուցման մեջ Սեմյոնովը պնդում էր, «թե ռուս ազգի պատմական առաքելությունն է ի մի ձուլելու փոքր ազգերը»³: Այս գաղափարի դեմ բուռն կերպով արտահայտվեցին հայ ու վրացի գործիչները: Եվ երբ 1882 թ. միասնական կազմակերպության պառակտումն արդեն կատարված փաստ էր, նրա անդամներից Ա. Դաստակյանն այդ մասին տեղեկացնում էր Ազուլիսում ուսուցչությամբ զբաղվող Քր. Միքայելյանին, շեշտելով, որ նոր ձևավորված հայկական խմբակը «...ամբողջությամբ կը նվիրե իր գործունեությունը անբախտ հայ ժողովրդի անպաշտպան շահերին»⁴: Այսպիսով, Ա. Դաստակյանն առաջիններից մեկն է ձևակերպել հայ ազգային-նարոդնիկական խմբակների ու կազմակերպությունների առանցքային նպատակը, որը որոշ ժամանակ անց հիմք դարձավ ՀՅ Դաշնակցության քաղաքական առաջադրանքների ձևավորման համար:

Սակայն դրանից հետո էլ ազգային նարոդնիկական կազմակերպությունների մեջ համախմբված հայ երիտասարդները շարունակում էին կապեր պահպանել ու համագործակցել ռուս նարոդնիկների և նրանց կազմակերպությունների հետ: Նրանց թվում էր նաև Աբրահամ Դաստակյանը, որը 1883 թ. աշնանը մեկնեց Մոսկվա ուսումը շարունակելու նպատակով և դարձավ «Հայրենասերների Միության» մոսկովյան կենտրոնի անդամ: Զուգահեռաբար նա մասնակցում էր նաև «Նարոդնայա Վոյա» կուսակցության աշխատանքներին: Այս կազմակերպությանն անդամակցելու համար Ա.

1 Стен Деятели революционного движения в России. Био-библиографический словарь, т. 3, вып. 2, М. 1934, էջ 1225-1226:

2 Стен Խողիկյան Գ. ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Եր., 2006, էջ 102:

3 Նույն տեղում, էջ 105:

4 Միքայելյան Քր., Բեկորներ իմ յուշերից, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1924, N 10, էջ 57:

Դաստակյանը 1884 թ. նոյեմբերի 16-ին ձերբակալվում է և ազատ արձակվում 1885 թ. սեպտեմբերի 11-ին: Այնուհետև, 1886-ի հունվարի 22-ին, բարձրագույն կարգադրությամբ նա երեք տարով ենթարկվում է ոստիկանության բացահայտ վերահսկողության Զաքաթալայում՝ մոր բնակության վայրում: 1889 թվականի հունվարի 22-ին ժամկետը լրանալուց հետո Ա. Դաստակյանն արժանանում է ավելի մեղմ պատժի՝ ոստիկանության գաղտնի վերահսկողության և նրան արգելվում է բնակվել մայրաքաղաքներում ու Պետերբուրգի նահանգում: Այնուհանդերձ, նույնիսկ ոստիկանության վերահսկողության տակ գտնվելու պայմաններում, Ա. Դաստակյանը շարունակում էր իր ակտիվ քաղաքական գործունեությունը: Նա Հովհ. Լոռու-Մելիքյանի, Մինոն Զավարյանի և այլ գործիչների հետ միասին հարում էր 1889-ին հիմնված «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության ձախակողմյան թևին, որն իր ժողովներն էր անցկացնում Թիֆլիսի «Յուժնիե նոմերա» հյուրանոցում: 1890-ի ամռանը դրա հիման վրա ստեղծվեց «Դրոշակ» խումբը, որը «Երիտասարդ Հայաստանի» ձախակողմյան թևի և նրան գաղափարապես մոտ հայ ազգային նարոդնիկության լավագույն ուժերի միաձուլման արդյունքն էր⁵:

Ուստի պատահական չէ, որ Քր. Միքայելյանի, Հովհ. Լոռու-Մելիքյանի, Մինոն Զավարյանի և Լևոն Սարգսյանի հետ միասին Ա. Դաստակյանը դարձավ կուսակցության Հիմնադիր ժողովների վերջում ձևավորված ՀՅ Դաշնակցության Կենտրոնական վարչության կամ Կենտրոնի 5 անդամներից մեկը⁶:

1892 թ. դեկտեմբերի վերջին Ա. Դաստակյանը ձերբակալվում է Գ. Արծրունու հուղարկավորության կապակցությամբ Թիֆլիսում ՀՅ Դաշնակցության կազմակերպած քաղաքական ցույցի ժամանակ: Այնուհետև՝ 1894-1902 թթ. նա բնակվել է Բաքվում, որտեղ ծառայել է որպես Նավթարդյունաբերողների միության գրասենյակի հաշվապահ, իսկ հետո՝ վարիչ: Այդ ընթացքում Ա. Դաստակյանը շարունակում էր մնալ ոստիկանության գաղտնի վերահսկողության տակ, թեև քաղաքական առումով նվազ ակտիվություն էր ցուցաբերում:

Դեռևս 1884-ին բացահայտված «Նարոդնայա Վոյա կուսակցության «Բանվորական խմբի»» գործով ցարական Ոստիկանության Դեպարտամենտը բավականին մանրամասն հետաքննություն է իրականացրել Ա. Դաստակյանի գործունեության վերաբերյալ: Մեկ փաթեթի մեջ միավորելով այդ ծավալուն գործում, ինչպես նաև նույն հաստատության կողմից 1888-ին սկսված հետաքննության նյութերում և այլ ֆոնդերում Ա. Դաստակյանի վերաբերյալ եղած հարուտ փաստաթղթերը, դրանք հրապարակում ենք առանձին փաթեթով: Քանի որ հրապարակվող նյութերը «ՎԷՄ»-ի 2018 թ. 3-րդ համարում լույս տեսած՝ «Հայրենասերների Միության» գործունեությանը վերաբերող 36 վավերագրերի օրգանական շարունակությունն են, պահպանում ենք միասնական համարակալումը: Հրապարակվող փաստաթղթերը պահվում են Մոսկվայում գտնվող Ռուսաստանի Դաշնության պետական արխիվի 102-րդ ֆոնդում և առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ:

5 Տե՛ս Խուդինյան Գ. նշված աշխատությունը, էջ 178:

6 Տե՛ս նույն տեղում, էջ 192:

Ռուս հեղափոխական նարողնիկության և նորաստեղծ ՀՅ Դաշնակցության միջև յուրահատուկ կապող օղակի դեր խաղացած Ա. Դաստակյանը եղել է կուսակցության ակունքներում կանգնած այն գործիչներից մեկը, որի մասին մինչ օրս ՀՅԴ պատմության սկզբնաղբյուրներն ու հրապարակի վրա եղած գրականությունը համեմատաբար սակավ տեղեկություններ են հաղորդում: Այդ պատճառով հույս ենք հայտնում, որ մեր հայտնաբերած նյութերը զգալիորեն կբարելավեն ընթերցողների տեղեկացվածությունը:

Մկրտիչ Դ. Դանիելյան
Պատմ. գիտ. թեկնածու

ԹԻՎ 37

Տիս. խորհրդակ. որդի Ալեքսանդր Սեմյոնովի մասին⁷

Թիֆլիսի նահանգային
ժանդարմական վարչության պետ
3 սեպտեմբերի 1883 թ.
N 10
ք. Թիֆլիս

(22 սեպտեմբերի)

Գաղտնի

Անցած օգոստոսի 22-ին քաղ. Թիֆլիսից Պետերբուրգ է մեկնել տեղի կրթական հասատություններից մեկի ուսուցիչ Տաստակովը⁸: Իմ ունեցած տեղեկություններից երևում է, որ Տաստակովի Պետերբուրգ մեկնելու նպատակն է հնարավորինս ծանոթանալ կայսրությունում գործող հեղափոխական խմբակների գործունեության ծրագրին, որին նա նախատեսում է հասնել Թամարա Ադամովայի միջոցով, որի հետ Տաստակովը գտնվում է ամենասերտ ընկերական կապերի մեջ: Տաստակովը հեղափոխական գործունեությունը նոր է սկսում: Պատիվ ունեմ այս մասին տեղեկացնելու Ձերդ Գերագանցությանը:

Գնդապետ Պուկարսկի⁹

ԹԻՎ 38

Թիֆլիսի նահանգային
ժանդարմական վարչության պետ
7 սեպտեմբերի 1883 թ.
N 7
ք. Թիֆլիս

Գաղտնի

Ձերդ Գերագանցություն Վյաչեսլավ Կոնստանտինովիչ

Իրենց քաղաքական անբարեհուսությամբ հայտնի Սեմյոնովը, Թամարա Ադամովան, Տաստակովը և մյուսները խոսում էին այն մասին, որ Բաքվում պետք է տեղի ունենան լուրջ անկարգություններ թաթար և ռուս բանվորների միջև:

7 Տե՛ս Ռուսաստանի Դաշնության պետական արխիվ (Государственный архив Российской Федерации, г. Москва), ֆ. 102, 3-րդ գործավարություն, 1883 թ., ցուցակ, գործ 688:

8 Ոստիկանության Դեպարտամենտի և նրա տեղական բաժանմունքների կազմած տարբեր փաստաթղթերում Ա. Դաստակյանը բնորոշվել է Տաստակով, Դոստակով, Դոստակյանց և այլ աղավաղված ազգանուններով:

9 Ռուսաստանի Դաշնության պետական արխիվ, նույն տեղում, թ. 15:

Նկատի ունենալով, որ Բաքվում բանվորների շրջանում մեկ անգամ չէ, որ ծագել են անկարգություններ, ինչպես նաև այն, որ այս տարվա ամռանը Ադամովան և Տաստակովը ժամանել էին Բաքու, եւ գերադասեցի պատմել դրա նշանակության մասին: Այդ ամենից հետո՝ օգտվելով նրանից, որ Սենյոնովը հրավիրում է «Ձեզ հայտնի անձնավորությանը» մասնակցել դրան, եւ առաջարկում եմ վերջինիս ուղարկել այնտեղ և ճշտել, թե որքանով են ստույգ բանվորների շրջանում նախատեսված անկարգությունները:

Այս կապակցությամբ հավաքված տեղեկություններից պարզվում է, որ իրոք այս տարվա ամռանը նավթային գործարաններում հաշվվում էին 300-ից ավելի ռուս բանվորներ, քանի որ թաթար բանվորները... ստանում էին չափազանց չնչին աշխատավարձ: Ոմն Վրոժումցեվ (կարծեմ լեռնային ինժիներ) նկատի ունենալով ռուս բանվորների հուսահատական վիճակը, մտադիր էր սադրել նրանց ծեծելու թաթար բանվորներին, բայց նրան համոզել են որոշ ժամանակով հրաժարվել դրանից, որպես վտանգավոր գործից:

Այս տեղեկություններից երևում է, որ Բաքվում բանվորների միջև անկարգությունները ծագել են ոչ թե ռուս և թաթար բանվորների միջև կրոնական կամ ազգային թշնամանքից, այլ այն պարզ պատճառով, որ թաթարները աշխատում էին այնպիսի ցածր աշխատավարձով, որով երբեք չի կարող բավարարվել ռուս բանվորը: Այդ իրավիճակում անկարգությունները բանվորների միջև նույնիսկ շատ էլ հնարավոր են՝ նախքան դրանից կկարողանան օգտվել չարամիտ մարդիկ¹⁰:

ԹԻՎ 39

«Նարողնայա Վոյա կուսակցության «Բանվորական խմբի»» մասին
(մեղադրյալներ Մարտինով, Երմոլան և ուրիշն.)¹¹

Ս. Պետերբուրգի նահանգային
Ժանդարմական վարչության պետ
19 նոյեմբերի 1884 թ.
N 5592

Ս. Պետերբուրգ

(22 նոյեմբերի 1884 թ.)

Գաղտնի

Այս նոյեմբերի 16-ի և 17-ի N 12435 և 72470 պատասխան գրություններում Պետերբուրգի հասարակական անվտանգության և կարգի պահպանության Բաժինը տեղեկացրել է Պետերբուրգում «Նարողնայա Վոյա կուսակցության «Բանվորական խումբ»» ընկերակցության գոյության մասին, որը իրենից ներկայացնում է այդ կուսակցության ֆրակցիան և հետապնդում է նպատակներ, որոնք նախատեսված են պատիժների մասին Ուլոժենիեի 250 հոդվածով: Այս տեղեկություններում բաժնի դիտարկումներով, ընկերակցության ղեկավարների հավաքի տեղ հանդիսանում է Պուշկինի փողոցի N 20 տան N 45 բնակարանը, որը պատկանում է վաճառականի դուստր Մարիա Մարտինովային: Այստեղ նրա մոտ որպես բնակիչներ ապրում էին Թիֆլիսի քաղաքացի Պավել Եզովը, և Պետերբուրգի համալսարանի ուսանողներ Նիկոլայ Երմոլանը, Ալեքսանդր Պերենշինը և Ալեքսանդր Մարտինովը, որոնք, այդ տեղեկությունների համաձայն, անմիջականորեն մասնակցում էին նշված հանցավոր ընկերակցության գործունեությանը:

Վերը շարադրվածի արդյունքում Բաժնի կարգադրությամբ այս նոյեմբերի 16-ի

¹⁰ Նույն տեղում, թ. 16:

¹¹ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության պետական արխիվ, ֆ. 102, 7-րդ գործավարություն, 1884 թ., ցուցակ, գործ 1225:

երեկոյան այդ բնակարանը և նրանում բնակվող բոլոր բնակիչները խուզարկության ենթարկվեցին, իսկ բնակիչները ձերբակալվեցին. իմիջիայլոց նրանց հետ միաժամանակ ձերբակալվեցին և խուզարկության ենթարկվեցին խուզարկության պահին այնտեղ գտնվող հյուրերը՝ իգական բարձրագույն կուրսերի ունկնդիրներ Աննա Ֆեդոտովան, Ավդոտյա Ցիտեկչը և Պետերբուրգի համալսարանի ուսանող Միխայիլ Օռլովը:

Այնուհետև նոյեմբերի 16-ի ընթացքում այդ նույն բնակարանում կալանավորվել, խուզարկվել են և ապա ձերբակալվել այդտեղ եկած քաղաքային ուսումնարանի ուսուցիչ Աբրամ Դոստակովը, գեղարվեստի Ակադեմիայի ուսանող Վասիլի Բելով-նին, Պետերբուրգի համալսարանի ուսանողներ Նիկոլայ Սեմյոնովը, Պավել Պամեկան և Սեմյոն Վախվախովը, իգական բարձրագույն կուրսերի ունկնդիր Մարիա Գորոխովան և վաճառականի դուստր Սեսիլյա Պոզները:

Վերը նշված անձանց մասին գործակալական ոստիկանական տեղեկությունները, որոնք վկայում են նրանց պատկանելությունը «Նարոդնայա Վոյա կուսակցության «Բանվորական խմբին»», հաստատում են ստացել նրանց մոտ իրականացված խուզարկության հետևյալ տվյալներով,

ա) Երմոլանի մոտ խուզարկության արդյունքում բռնագրավվել է այս տարվա նոյեմբերի 14-ին գրված նամակ, որը դատելով ձեռագրից, գրվել է նույն նոյեմբերի 15-ին՝ Պետերբուրգում ձերբակալված Պետերբուրգի համալսարանի նախկին ուսանող Պյոտր Ցակուբովիչի կողմից, որը մի քանի ամիս փնտրվում էր «Նարոդնայա Վոյա» կուսակցության կենտրոնական խմբակին պատկանելու մեղադրանքով: Այդ նամակում Ցակուբովիչը կուսակցության «Գործադիր Կոմիտեի» անունից դիմում է Երմոլանին և «ընկերներին՝ որպես նույն կուսակցության «Բանվորական խմբի» ներկայացուցիչների, Ռուսական կառավարության դեմ հեղափոխական պայքարի ասպարզում միահամուռ գործելու մասին խնդրանքով:

բ) Պերելետիսից, Մարտինովայից, Ավդոտյա Ցիտովիչից, Գեշլուկայից, Գոլով-նյայից և Վախվախովից բռնագրավվել են տարբեր հեղափոխական հրատարակություններ, այդ թվում առաջին երկուսից «Նարոդնայա Վոյա» ամսագրի 10-րդ համարի մի քանի տասնյակ օրինակներ,

գ) բացի այդ բոլոր ձերբակալվածներից բռնագրավվել են մեծ քանակությամբ տարբեր թղթեր և գրագրություններ, որոնց նշանակությունը կարելի է ճշտել միայն մանրամասն գնումովից հետո:

Նկատի ունենալով վերը նշվածը և համաձայն այս թվականին կայացած որոշման, նախատեսվում է նաև անցկացնել հետաքննություն «Նարոդնայա Վոյա կուսակցության «Բանվորական խմբի»» հանցավոր գործունեության վերաբերյալ: Այս հետաքննությունը սկսվել է ձերբակալված անձանցից բռնագրավված թղթերի մանրամասն գնումով, քանի որ այս գործի մեջ ընդգրկված անձանց հարցաքննությունը՝ կապված նրանց ներկայացված մեղադրանքի հետ, կարող է արդյունավետ լինել միայն վերը հիշատակված թղթերի հետազոտության դեպքում, իսկ դա կպահանջի որոշ ժամանակ:

Շարադրվածին պատիվ ունեն հավելելու, որ Բաժնի կողմից այդ գործով ձերբակալված անձինք, դրանք են՝ Մարտինովան, Երմոլանը, Մարտինովը, Պրիլեշինը, Եգովը, Օռլովը, Ֆեդոտովը, Ցիտեկչը, Սեմյոնովը, Դոստակովը, Գոլովյան, Գասիևը, Վախվախովը, Գորլովան և Պոզները, նկատի ունենալով պատիժների մասին Ուլոժենիեի 250 հոդվածով նախատեսված հանցագործության մեջ նրանց ներկայացված մեղադրանքը, կմնան հսկողության տակ մինչև հարցաքննությունը:

Գնդապետ (ստորագրությունը անընթեռնելի է)¹²:

¹² Ռուսաստանի Դաշնության պետական արխիվ, ֆ. 102, 7-րդ գործավ., 1884 թ. ցուցակ, գ. 1225, թթ. 1-3:

ԹԻՎ 40

Ս. Պետերբուրգի նահանգային
ժանդարմական վարչության պետ
19 նոյեմբերի 1884 թ.
N 5378
Ս. Պետերբուրգ

(22 նոյեմբերի 1884 թ.)

Գաղտնի

Կից ներկայացնելով մեղադրյալներ՝ Թիֆլիսի բնակիչ Պավել Եզովի, քաղաքային ուսուցիչ Աբրամ Դաստակովի, գեղարվեստի Ակադեմիայի աշակերտ Վասիլի Գոլովայի և Ս. Պետերբուրգի համալսարանի ուսանող Սեմյոն Վախվախովի խուզարկության ժամանակ բռնագրավված վրացերեն և հայերեն լեզվով ձեռագրերը և գրագրությունները՝ պատիվ ունեն կարգադրություն խնդրել ուսումնասիրելու այդ թղթերը և եթե նրանց մեջ հայտնաբերվեն դատապարտելի բովանդակության կամ ուշադրության արժանի նյութեր, ապա դրանք չպահել, այլ թարգմանությամբ ուղարկել ինձ՝ գործին կցելու համար:

Գնդապետ (ստորագրությունը անընթեռնելի է)¹³:

ԹԻՎ 41

Ն.Գ.Ն.
Ոստիկանության Դեպարտամենտ
4-րդ գործավ.
26 նոյեմբերի 1884 թ.

Արտաքին գործերի նախարարության
Ասիական Դեպարտամենտին

Կից ուղարկելով հայերեն և վրացերեն լեզուներով ձեռագրերը և գրությունները՝ Ոստիկանության Դեպարտամենտը պատիվ ունի խնդրելու Ասիական Դեպարտամենտին չմերժել համապատասխան կարգադրությունը՝ այդ փաստաթղթերի գնման և դրանցից հանցավոր բովանդակություն ունեցողների թարգմանությամբ վերաբերյալ:

Բաժնի պաշտոնակատար (ստորագրությունը անընթեռնելի է)¹⁴:

ԹԻՎ 42

Ս. Պետերբուրգի նահանգային
ժանդարմական վարչության պետ
5 դեկտեմբերի 1884 թ.

Գաղտնի

Որպես լրացում անցած նոյեմբերի 24-ի N 5682 զեկուցման՝ պատիվ ունեն տեղեկացնելու, որ ստորև հիշատակված մեղադրյալների ցուցմունքներից ձշտվել է հետևյալը...

... 9) Ս. Պետերբուրգի ուսանող Սեմյոն Ռևազի Վախվախով, վրացի, 24 տարեկան, ազնվական. ձերբակալվել է Մարիա Մարտինովայի բնակարանում այնտեղ կատարված խուզարկության հաջորդ օրը, իրեն մեղավոր չի ճանաչում որևէ հեղափոխական կուսակցության պատկանելու կամ հարաբերության մեջ; Մարտինովայի բնակարան էր եկել հանդիպելու իր հայրենակից Եզովին, որին նախկինում էլ էր այցելել, իսկ որևէ այլ նպատակով Մարտինովայի բնակարան չի այցելել: Եղել են

¹³ Նույն տեղում, թ.4:

¹⁴ Նույն տեղում, թ. 5:

այնտեղ արդյոք ինչ-որ հավաքներ թե ոչ, նա չգիտի և «Նարողնայա Վոյա կուսակցության «Բանվորական խմբի»» մասին երբեք չի լսել:

Վախվախովի մոտ խուզարկության ժամանակ հայտնաբերվել են՝ 1. «Ռուսական հայրերը» և «Ռուսական հասարակությանը» բրոշյուրները, 2. տպագրված կոչ:

Տպագրված բրոշյուրների հետ կապված Վախվախովը հայտարարեց, որ դրանք վերցրել է մի համալսարանական ընկերոջից՝ հետաքրքրասիրությունից դրդված կարդալու նպատակով, որի անունը հրաժարվեց տալ¹⁵:

ԹԻՎ 43

Արտաքին գործերի նախարարություն Ոստիկանության Դեպարտամենտին
Ասիական Դեպարտամենտ
21 դեկտեմբերի 1884 թ.
N 159

Ի պատասխան նոյեմբերի 26-ի N 2872 գրության՝ Ասիական Դեպարտամենտը պատիվ ունի վերադարձնել Ոստիկանության Դեպարտամենտին հայերեն և վրացերեն լեզուներով ձեռագիր գրությունները՝ իրենց լուսերեն թարգմանություններով:

Փոխտնօրենի պաշտոնակատար (ստորագրությունը անընթեռնելի է)¹⁶:

ԹԻՎ 44

Ս. Պետերբուրգի նահանգային
Ժանդարնական վարչության պետ
23 դեկտեմբերի 1884 թ.
N 4352

Որպես լրացում այս դեկտեմբերի 5-ի N 5978 իմ հաղորդման՝ պատիվ ունեմ գեկուցելու, որ «Նարողնայա Վոյա կուսակցության «Բանվորական խմբի»» պատկանելու մեղադրանքով գործի մեջ ընդգրկված անձանց հետաքննությունը շարունակվելու արդյունքում պարզվել է հետևյալը...

3. Աբրամ Նիկիտի Դոստակով, քաղաքային ուսուցիչ, հայ, վաճառականի որդի, 21 տարեկան, ձերբակալվել է նոյեմբեր 16-ին՝ Մարիա Մարտինովայի բնակարան այցելելու արդյունքում:

Խուզակության ժամանակ Դոստակովի մոտ վարկաբեկող որևէ բան չի հայտնաբերվել, ի պատասխան Դոստակովին ներկայացված մեղադրանքին, նա ամբողջությամբ մերժելով իր որևէ առնչությունը «Նարողնայա Վոյա» կուսակցության հետ, բացատրեց, որ Պավել Եզովի և Նիկոլայ Երմոլակի հետ ծանոթ է դեռևս Թիֆլիսից և նրանց այցելել է առանց որևիցե քաղաքական նպատակների, Միխայիլ Օռլովի հետ ծանոթացել է Համալսարանում և թեպետ վերջին շրջանում նրա հետ բնակվում էր նույն բնակարանում, բայց տարբեր սենյակներում, նրա հետ ոչինչ ընդհանուր չունենալով: Սեմյոնովի հետ հանդիպել է միայն Համալսարանում, բանվորական խմբի գոյության մասին ոչինչ չգիտի, որևէ հավաքի չի մասնակցել և բացի Եզովից և Երմոլակից, Մարտինովայի բնակարանում որևէ մեկի հետ ծանոթ չի եղել:

Դոստակովին ներկայացված՝ մեղադրյալ Ալեքսեյ Կիրայիշչևովի նոյեմբերի 27-ին տրված ցուցմունքներին ի պատասխան, նա ոչ միայն չհաստատեց նրանցում շարադրված հանգամանքները, այլև նույնիսկ չձանաչեց Ալեքսեյ Կիրայիշչևովի ֆոտոլուսանկարը, այն նույն ուսանող Կիրայիշչևովի, որի հետ թեպետ ինքը [նախապես] ծանոթ չէր, բայց երբեմն հանդիպել էր Համալսարանում:

¹⁵ Նույն տեղում, թ.թ. 17, 34:

¹⁶ Նույն տեղում, թ. 36:

Ընդհանրապես մեղադրյալ Աբրահամ Դոստակովը ներկայումս հակված չէ անկեղծության, և նրա հետագա ցուցմունքները կախված կլինեն հետաքննության միջոցով ձեռք բերված տվյալներից և նյութերից, որոնք նրան կարող են ստիպել խոստովանել¹⁷:

ԹԻՎ 45

Ս. Պետերբուրգի նահանգային
ժանդարմական վարչության պետ
11 հունվարի 1885 թ.

Ի թիվս այլ թղթերի, որոնք խուզարկության ժամանակ բռնագրավվել են Մարիա Մարտինովայի բնակարանում բնակվող Թիֆլիսի քաղաքացի Պավել Եզովից, հայտնաբերվել են ԺՆՆ՝ Աննա Սուլխանովայի անունով հասցեգրված՝ պատվիրած նամակների փոստային անդորրագրեր, այնուհետև Եզովի մոտ հայտնաբերված վրացերեն նամակների թարգմանությունը, որոնցից մեկում, ակնհայտորեն գրված նույն Աննա Սուլխանովայի կողմից, իմիջիայրոց ասվում է հետևյալը. «Ես ամսական ստանում եմ 25 ռուբլի... ինչքան կարողանում եմ խնայում եմ, որպեսզի մեկնեմ Փարիզ, բայց միջոցները չեն բավականացնում: Համալսարանում լսում եմ կենդանաբանության դասախոսություններ պրոֆեսոր Ֆոժտեի մոտ և ընդհանրապես հույս ունեմ այստեղ փոխհատուցել այն, ինչը կորցրել եմ Պետերբուրգում: Այստեղ մենք հիմնել ենք դրամարկը և շաբաթական 8-9 ֆրանկ ենք հավաքում: Այդ մասին ոչ մեկին չասես, բացի Տեր-Աբրահամովից: Ես այստեղ ներկա եմ լինում բոլոր հավաքներին...»

Ըմբիզբանտները ինձ մոտ են, իսկ ես նրանց մոտ: Չեմ ցանկանում անգամ բժշկին այն վիճակում լինել, որում նրանք գտնվում են՝ առանձնապես օրհորդ Վերան¹⁸: Նա չի պարում. ես ստիպեցի նրան՝ զուգընկեր չունենալու պատճառով ինձ հետ պարել: Պլեխանովը¹⁹ կարդաց իր ռեֆերատը, մյուսները նույնպես ասում են, որ այդ բոլորը մեռած վիճակ է: Երբևէ կտեղեկացնեմ մանրամասները»:

Զեկուցելով այս ամենի մասին Դեպարտամենտին՝ խոնարհաբար խնդրում եմ տեղեկացնել, չկան արդյոք ինչ որ տեղեկություններ վերը նշված Սուլխանովայի մասին, որը ըստ Եզովի բացատրությունների, ապրում է ԺՆՆում իր եղբոր Վասիլիի հետ միասին, որտեղ նրանք մեկնել են անցյալ տարվա սկզբներին՝ կրթությունն ավարտելու նպատակով:

Գնդապետ (ստորագրությունը անընթեռնելի է)²⁰:

ԹԻՎ 46

Ն.Գ.Ն.
Ոստիկանության Դեպարտամենտ
4-րդ բաժին
21 հունվարի 1885 թ.

Ս. Պետերբուրգի նահանգային
ժանդարմական վարչության պարոն
պետին

Ի պատասխան հունվարի 11-ի N 232 գրության՝ Ոստիկանության Դեպարտամենտը պատիվ ունի տեղեկացնելու Ձերդ Գերագանցությանը, որ ԺՆՆում բնակվող Աննա Սուլխանովայի վերաբերյալ Դեպարտամենտի գործերում տեղեկություններ չկան²¹:

17 Նույն տեղում, թթ. 45, 50:

18 Վերան նշանավոր նարդինիլ-հեղափոխական Վերա Զասուլիչն է՝ Գ. Պլեխանովի գլխավորությամբ նարդինիական գաղափարախոսությունը մարքսիզմով փոխարինած՝ «Աշխատանքի ազատագրություն» խմբի անդամը:

19 Գեորգի Պլեխանով - ռուսական սոցիալ-դեմոկրատիայի հիմնադիրն ու գաղափարախոսը:

20 Ռուսաստանի Դաշնության պետական արխիվ, ֆ. 102, 7-րդ գործավ., 1884 թ. ցուցակ, գ. 1225, թ. 62:

21 Նույն տեղում, թ. 63:

ԹԻՎ 47

Ս Պետերբուրգի նահանգային
ժանդարմական վարչության պետ
15 մարտի 1885 թ.
N 1982

«Նարոդնայա Վոյա կուսակցության «Բանվորական խումբ»» հանցավոր կազմակերպությանը պատկանելու մեջ մեղադրվող անձանց գործով հետաքննությունն ավարտվել է... և այսօր ուղարկվել է Ս. Պետերբուրգի Դատաստանական պալատի Դատախազին: Պատիվ ունեն այդ մասին տեղեկացնելու և ուղարկելու այս գործի հետ կապված մեղադրյալների ցուցակը:

Գնդապետ (ստորագրությունը անընթեռնելի է)²²:

«Նարոդնայա Վոյա հեղափոխական կուսակցության «Բանվորական խմբին» պատկանելու մեջ մեղադրվող ամբաստանյալների Ցուցակ

Ամբաստանյալների անունը, ազգանունը, հայրանունը, կոչումը և տարիքը	Պատժամիջոցը	Երբ է սկսվել
Պավել Յակովի Եզով, Թիֆլիսի քաղաքացի, 22 տարեկան	ռստիկանության հատուկ վերահսկողություն	1884 թ. նոյեմբերի 24-ից
Աբրահամ Նիկիտի Դոստակով, վաճառականի որդի, հայ, քաղաքային ուսուցիչ, 21 տարեկան	Ս. Պետերբուրգի նախնական ձերբակալության Տուն՝ կալանքի տակ	1884 թ. նոյեմբերի 19-ից
Մեմյոն Ռևազի Վախվախով վրացի, ազնվական, Ս. Պետերբուրգի համալսարանի ուսանող, 24 տարեկան	պահվում էր վերահսկողության տակ, բնակության վայրից չբացակայելու ստորագրությամբ	1884 թ. նոյեմբերի 24-ից

ԹԻՎ 48

Ս. Պետերբուրգի նահանգային
ժանդարմական վարչության պետ
12 սեպտեմբերի 1885 թ.
N 7593

Ոստիկանության Դեպարտամենտին

... Ս. Պետերբուրգի Դատաստանական Պալատի Դատախազի առաջարկության արդյունքում պետական հանցագործության մեջ մեղադրանքով Նախնական ձերբակալության Տանը՝ կալանքի տակ պահվող, վաճառականի որդի Աբրահամ Նիկիտի Դոստակովը այս սեպտեմբերի 11-ին ազատվել է կալանքից հազար ռուբլի գրավի դիմաց, որը վճարել էր կոլեգիական քարտուղար Ալեքսեյ Գիզետտին:

Պատիվ ունեն տեղեկացնելու այդ մասին Ոստիկանության Դեպարտամենտին որպես լրացում իմ այս մարտի 15-ի N 1982 զեկուցման:

Գնդապետ (ստորագրությունը անընթեռնելի է)²³:

22 Նույն տեղում, թ. 80:
23 Նույն տեղում, թ. 102:

ԹԻՎ 49 Տեղեկանք

Աբրահամ Նիկիտի Դոստակով, 21 տարեկան, վաճառականի որդի, հայ, քաղաքային ուսումնարանի ուսուցիչ, Ելիզավետպոլի նահանգի Շուշի քաղաքի բնակիչ, Ս. Պետերբուրգի համալսարանի ազատ ունկնդիր: Սովորել է Շուշիի հայկական հոգևոր ու քաղաքային ուսումնարաններում և Թիֆլիսի Ուսուցչական սեմինարիայում:

Ձերբակալվել է Մարտինովայի բնակարանում խուզարկության հաջորդ օրը: Որոշ ժամանակ բնակվել է Օռլովի և Սեմյոնովի հետ: Ըստ Կիրայիշկովի ցուցմունքների, Դոստակովը, Սեմյոնովի նման ներկայացնում էր «Նարոդնայա Վոյա» կուսակցության «Երիտասարդական միության» խմբակներից մեկը²⁴:

ԹԻՎ 50

Արդարադատության
նախարարություն
Երկրորդ Զրեական բաժնի
Դեպարտամենտ
3 հոկտեմբերի 1885 թ.
N 2010

Ոստիկանության Դեպարտամենտին

Որպես լրացում Արդարադատության նախարարության պարոն Կառավարչի անցած նոյեմբերի 19-ի N 1857 գրության՝ Դեպարտամենտը պատիվ ունի կից ուղարկելու 7 էջից բաղկացած գրագրությունը պետական հանցագործության մեջ մեղադրվող Աբրահամ Դոստակովին և Նիկոլայ Սեմյոնովին կալանքից ազատելու մասին:

Փոխտնօրենի պաշտոնակատար (ստորագրությունը անընթեռնելի է)²⁵:

ԹԻՎ 51

Ս. Պետերբուրգի քաղաքապետի
Ս. Պետերբուրգի
կարգի և հասարակական
անվտանգության պահպանման
բաժանմունք
10 հոկտեմբերի 1885 թ.
N 10339

Ոստիկանության Դեպարտամենտին

Անցած սեպտեմբերի 11-ի N 7040 գրության հիման վրա պատիվ ունենք տեղեկացնելու Ոստիկանության Դեպարտամենտին, որ Պետերբուրգում և Պետերբուրգի նահանգի սահմաններում Նիկոլայ Սեմյոնովի և Աբրահամ Դոստակովի բնակվելն արգելելու կարգադրությունն արդեն տրված է:

Գեներալ-լեյտենանտ (ստորագրությունը անընթեռնելի է)²⁶:

24 Նույն տեղում, թ. 107:

25 Նույն տեղում, թ. 118:

26 Նույն տեղում, թ. 121:

ԹԻՎ 52

Թիֆլիսի նահանգային
ժանդարնական վարչության
պետ
14 հոկտեմբերի 1885 թ.
N 77

Ի պատասխան այս տարվա սեպտեմբերի 11-ի N 2042 գրության՝ պատիվ ունեն տեղեկացնելու, որ պետական հանցագործության մեղադրանքով հետաքննության մեջ ընդգրկված վաճառականի որդի Աբրամ Դոստակովը այս տարվա հոկտեմբերի 12-ին ժամանեց Թիֆլիս և նրա նկատմամբ հաստատվել է խիստ վերահսկողություն: Գեներալ-մայոր ստորագրությունը անընթեռնելի է):²⁷:

ԹԻՎ 53

Ոստիկանության Դեպարտամենտը պատիվ ունի տեղեկացնելու Ս. Պետերբուրգի նահանգային ժանդարնական վարչության պետին առ ի տեղեկություն, որ նրան վստահված վարչությունում իրականացված հետաքննությունը վճռահատվել է վարչական կարգով, ընդ որում այս տարվա հունվարի 22-ի Բարձրագույն կարգադրությամբ մեղադրյալները ենթարկվելու են հետևյալ պատժամիջոցներին... 2. Այլոնա Վորոնցովային, Ռոզալի Գերշկովիչին, Նիկոլայ Սեմյոնովին և Աբրամ Դոստակովին որպես պատիժ այս գործի հետ կապված պահել կալանքի տակ և նրանցից յուրաքանչյուրին ենթարկել ոստիկանության բացահայտ վերահսկողության երեք տարի ժամկետով... Դոստակովին իր հարազատների մոտ՝ Թիֆլիսի նահանգի Զաքաթալա քաղաքում²⁸:

ԹԻՎ 54

Ս. Պետերբուրգի համալսարանի ուսանող, վաճառականի որդի Աբրահամ Նիկիտիի Դոստակովի մասին

15 հունվարի 1888 թ.
Ազգանուն, անուն, հայրանուն –
Բնակության վայրը –
Ուսումնառության վայրը

3-րդ Գործավարության տեղեկանք
Դոստակով Աբրահամ Նիկիտիի
ք. Բաքու

Շուշիի հայկական հոգևոր և քաղաքային ուսումնարաններ, Պետերբուրգի համալսարանի ազատ ունկնդիր, Թիֆլիսի Ալեքսանդրյան ուսուցչական ինստիտուտի ուսուցիչ

Քաղաքում և գոյատևման միջոցները

Բաքու քաղաքի նավթարդյունաբերողների Համագումարի Խորհրդի գրասենյակի կառավարիչ

Գտնվում է արդյոք ոստիկանության գաղտնի վերահսկողության տակ և չի սահմանափակված բնակության վայրի ընտրության իրավունքը

Որպես ոստիկանության բացահայտ հսկողության տակ գտնվող՝ արգելվել է բնակվել մայրաքաղաքներում և Ս. Պետերբուրգի նահանգում²⁹:

27 Նույն տեղում, թ. 122:
28 Նույն տեղում, թ. 128:
29 Ռուսաստանի Դաշնության պետական արխիվ, ֆ.102, 3-րդ գործավարություն, 1889 թ. ցուցակ, գործ. 1289, թ. 2:

Աբրամ Նիկիտիի Դոստակովը 1884 թ. հետաքննության մեջ է ընդգրկվել Ս. Պետերբուրգում հայտնաբերված այսպես կոչված՝ «Նարոդնայա Վոյա կուսակցության «Բանվորական խմբի»» գործի հետ կապված:

Հետաքննության մեջ ընդգրկելու առիթ ծառայեց հետևյալ հանգամանքը: 1884 թ. նոյեմբերին գործակալների հաղորդած լուրերով տեղեկություն ստացվեց Ս. Պետերբուրգում գոյություն ունեցող հանցավոր ընկերակցության մասին, որը իրեն անվանում էր «Նարոդնայա Վոյա կուսակցության «Բանվորական խումբ»», և ըստ նույն տեղեկությունների, նրա հավաքների կենտրոն էր ծառայում Պուշկինի փողոցի վրա գտնվող սանիտարուհի Մարիա Մարտինովայի բնակարանը, որի մոտ բնակվում էին Ս. Պետերբուրգի ուսանողներ Նիկոլայ Երմոլանը, Ալեքսանդր Պերելետինը, Ալեքսանդր Մարտինովը և Թիֆլիսի քաղաքացի Պավել Եզովը:

Արդյունքում 1884 թ. նոյեմբերի 16-ին այդ բնակարանը խուզարկության ենթարկվեց, և նրանում ապրող բոլոր բնակիչները ձերբակալվեցին: Նրանցից հետո ձերբակալվեց նաև հաջորդ օրն այս բնակարան այցելած քաղաքային ուսուցիչ Աբրամ Դոստակովը:

Հետաքննությամբ պարզվել է, որ Աբրամ Դոստակովը, համատեղ բնակվելով այս գործով մեղադրյալներ Օռլովի և Մեմյոնովի հետ, հանդիսացել է այդ նույն խմբի խմբակներից մեկի ներկայացուցիչը, որը կոչվել «Նարոդնայա Վոյայի «Երիտասարդական միություն»», զբաղվել է նոր անդամների հավաքագրումով և նրա բնակարանը ծառայում էր որպես ընկերակցության անդամների հավաքի վայր:

Խուզարկության ժամանակ Դոստակովի մոտոդատապարտելի որևէ բան չի հայտնաբերվել:

Դոստակովը հսկողության տակ է գտնվել 1884 թ. նոյեմբերի 16-ից մինչև 1885 թ. սեպտեմբերի 11-ը և այնուհետև գրավով ազատվել է:

1886 թ. հունվարի 22-ի Բարձրագույն կարգադրությամբ Դոստակովի պատժի չափ է սահմանվել նշված ժամկետում կալանքի տակ գտնվելը, և նա երեք տարի ժամկետով ոստիկանության բացահայտ վերահսկողության է ենթարկվել, իսկ արտաքսվել է իր հարազատների բնակության վայր՝ Թիֆլիսի նահանգի Զաքաթալա քաղաք:

1889 թ. հունվարի 22-ին ազատվելով բացահայտ վերահսկողությունից՝ Դոստակովը դրվել է գաղտնի վերահսկողության տակ:

Կովկասի քաղաքացիական մասի կառավարչի օգնականը 1892 թ. օգոստոսի 21-ի թիվ 386 գրությամբ ի միջի այլոց հաղորդել է, որ Երևան՝ Ադոլֆի Դևոյանցի³⁰ անունով հասցեգրված նամակները, որոնցում [նա] հրավիրվում էր մասնակցելու հայկական խմբակների ներկայացուցիչների համագումարին, ուղարկվում էին Թիֆլիսից՝ Արշակ Տեր-Գրիգորյանցի³¹ կողմից, որը 1880-ից անընդմեջ զբաղվում էր հայկական շարժման կազմակերպմամբ և որ հայկական խմբակների ներկայացուցիչների հրավիրման մեջ և ընդհանրապես՝ հայկական հեղափոխական շարժման հետ կապված տարբեր տեսակի հրահանգներ կազմելու մեջ Արշակի գործակիցներն են Թիֆլիսում բնակվող բժիշկ Լորիս-Մելիքովը³², Գաբր Մուրգայանը³³, Վաստ Օրխելաձեն և «Թիֆլիսակի լիստոկի» խմբագրությունում ծառայող Աբրամ Դոստակովը:

1893 թ. հունվարի 22-ի գրությամբ Կովկասի քաղաքացիական մասի կառավարիչը, տեղեկացնելով 1892 թ. դեկտեմբերին՝ «Մշակ» թերթի հրատարակիչ խմբագիր Գրիգոր Արծրունու հուղարկավորության ժամանակ Թիֆլիսում տեղի ունեցած ան-

30 Պարզ աղավաղում է: 1892 թվականի հունիսի 20-ին նշանակված ՀՅԳ առաջին Ընդհանուր ժողովի առիթով Թիֆլիսից Երևան ուղարկված այս նամակի հասցեատիրոջ իրական անուն-ազգանունն էր՝ Հակոբ Թադևոսյանց կամ՝ Թևոսյանց, ով մաթեմատիկա էր դասավանդում Երևանի հայկական ճեմարանում:

31 Արշակ Տեր-Գրիգորյանը մինչև Բր. Միքայելյանի 1890 թ. հուլիսի 7-ի վերադարձն Ազուլիսից, գործում էր Թիֆլիս արքայական նարոդնիկների խմբակում: Այնուհետև՝ 1890 թ. ամռանը Քրիստափորը նրան ներառում է «Երիտասարդ Հայաստանի» ձախակողմյան թևի հետ հայ նարոդնիկ գործիչների միավորման արդյունքում ստեղծված «Դրոշակ» խմբի մեջ, որն առաջին քայլն էր ՀՅ Դաշնակցության ձևավորման ճանապարհին:

32 Խոսքը ՀՅԳ առաջին Կենտրոնի անդամ բժիշկ Հովի. Լոռու-Մելիքյանի մասին է:

33 Գաբրիել Միրզոյանը ՀՅԳ Հիմնադիր սերնդի ակտիվ գործիչներից մեկն էր:

կարգությունների³⁴ մասին, իմիջիայլոց հաղորդել է, որ հետաքննությամբ պարզվել է Աբրամ Դոստակովի և ուրիշն. անձնական մասնակցությունը ոստիկանության հետ քայման և ամբոխին հրահրելու գործում:

1893 թ. մայիսի 26-ին թիվ 433 գրությամբ Թիֆլիսի Նահանգային ժանդարմական վարչության պետը տեղեկացրել է, որ 1892 թ. դեկտեմբերին Արծրունու թաղման ժամանակ ոստիկանության հրահանգներին դիմադրություն ցույց տալու փաստը հարմար առիթ է մի քանի անձանց ձևական հետաքննության մեջ ընդգրկելու համար, սակայն քաղաքացիական մասի պետը չցանկացավ դրան նշանակություն տալ, և գործը սահմանափակվեց իրադարձությունների ժամանակ տեղում ձերբակալվածների՝ Տեր-Գրիգորյանցի, Գաբո Միրզոևի և Աբրամ Դոստակովի մոտ խուզարկություններով, որոնք սակայն որևէ արդյունք չտվեցին:

Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետն ավելացրեց, որ իր ունեցած տեղեկությունների համաձայն՝ ինքը եկել է այն եզրակացության, որ Աբրամ Դոստակովը, Արշակ Տեր-Գրիգորյանցը և ուրիշներ կազմում են այն անձանց խումբը, որոնք գործուն մասնակցություն են ունենում թուրքահայերի օգտին դրամ հավաքելու մեջ և այս անձանց նկատմամբ հաստատված է հսկողություն:

Բաքվի նահանգի Տեղեկագրում՝ մինչև 1897 թվականի հուլիսի 1-ը, նշված է. «Նավթարդյունաբերողների համագումարի խորհրդի գրասենյակի կառավարիչ Աբրամ Դոստակովը բնակվում է Բաքվում: Հաճախակի մեկնում է Բալախանի գյուղը, որտեղ երբեմն գիշերում է ինժիներ Պորագինսկու մոտ: 1897 թ. փետրվարի 17-ից մինչև մարտի 9-ը նա եղել է Թիֆլիսում, հավանաբար նա այնտեղ մտերիմ է Խանդամիրովների ընտանիքի հետ, որոնցից մեկը՝ Գրիգորին հաճախ է այցելում իր մորը, իսկ Անդրեյ Խանդամիրովը հանդիսանում է զանձապահ:... Պողիսկու՝ վերահսկողության տակ գտնվողի հետ, ծանոթությունը կասկածելի է, հաճախ երեկոյան հավաքվում են հայերը և մնում մինչև առավոտ: Ըստ նրանց զբաղեցրած պաշտոնների, նրանք հաճախակի մասնավոր բնույթի հարաբերություններ ունեն նավթային մասով ծառայակիցների՝ հիմնականում անբարեհույս անձնավորությունների հետ»:

15 հունվարի 1898 թ.³⁵

**ԹԻՎ 55
Տեղեկանք**

1882 թ.³⁶ մարտի 1-ի դրությամբ ոստիկանության գաղտնի վերահսկողության տակ գտնվող անձանց մասին

Կոչումը, անունը, հայրանունը և ազգանունը

– Դոստակով Աբրամ Նիկիտիի, հայ, վաճառականի որդի, քաղաքային ուսուցիչ, Պետերբուրգի համալսարանի նախկին ազատ ունկնդիր, կրթություն է ստացել Շուշիի հայկական հոգևոր և քաղաքային ուսումնարաններում և Թիֆլիսի Ալեքսանդրյան ուսուցչական ինստիտուտում;

34 Գր. Արծրունու հուղարկավորության թափոխի առջև այդ քաղաքի գլխավոր՝ Գոլովինսկի (այժմ Ռուսթավելի) պողոտա մուտք գործելու արգելքը դիտելով որպես անարգանք հայության հանդեպ՝ ՀՅ Դաշնակցությունը 1892 թ. դեկտեմբերի 27-ին Ս. Զավարյանի գլխավորությամբ կազմակերպեց իր առաջին քաղաքական ցույցն Անդրկովկասում: Դաշնակցականները ձեռքբեցին ոստիկանական շրջափակումը և փաստի առաջ կանգնած Կովկասի կառավարչապետին ստիպեցին հարգանքի տուրք մատուցել իր նստավայրի առջևով անցնող բազմահազարանոց թափոռին:

35 Ռուսաստանի Դաշնության պետական արխիվ, ֆ. 102, 3-րդ գործավարություն, 1889 թ. ցուցակ, գործ. 1289, թթ. 3-4:

36 Պարզ վրիպակ է: Խոսքը 1892 թվականի մասին է:

Ինչ գործով է ենթարկվել հրապարակային հսկողության, երբ և ինչքան ժամկետով.	«Նարոդնայա Վոյա կուսակցության «Բանվորական խմբի»» գործով: 1886 թ. հունվարի 22-ին Բարձրագույն կարգադրությամբ, գտնվել է ոստիկանության հսկողության տակ՝ երեք տարի ժամկետով իր հարազատների մոտ՝ Զաքաթալայում:
Բացահայտ հսկողության ավարտի ժամկետը	- 22 հունվարի 1889 թ.
Որտեղ է ենթարկվել հսկողության	- Զաքաթալայի օկրուգի Զաքաթալա քաղաքում
5-րդ բաժնի - N. 6350 գործի թիվը ³⁷	

ԹԻՎ 56

Թիֆլիսի նահանգապետի գրասենյակ
14 մարտի 1886 թ.

Ոստիկանության Դեպարտամենտին

Պատիվ ունեն տեղեկացնելու Ոստիկանության Դեպարտամենտին, որ քանի որ Զաքաթալա քաղաքը, որտեղ ուղարկվել է ոստիկանության բացահայտ վերահսկողության տակ գտնվող, նախկին ուսուցիչ, վաճառականի որդի Աբրամ Դոստակովը, գտնվում է ինձ վստահված նահանգից դուրս՝ Զաքաթալայի օկրուգում, այդ պատճառով Դոստակովի վերաբերյալ գրությունները նրա հետ միասին ուղարկում եմ նշված օկրուգի պետին:

Նահանգապետ, գեներալ-մայոր (ստորագրությունն անընթեռնելի է)³⁸:

ԹԻՎ 57

Թիֆլիսի նահանգապետի գրասենյակ
2 մայիսի 1886 թ.

Ոստիկանության Դեպարտամենտին

Շուշիի քաղաքացու այրի Շուրա Աղաբեկի Դոստակովան ինձ է դիմել խնդրանքով՝ հանդես գալու միջնորդությամբ, որպեսզի թույլատրվի նրա որդուն, Զաքաթալա քաղաքում ոստիկանության բացահայտ վերահսկողության տակ գտնվող Աբրամ Դոստակովին տեղափոխվելու Թիֆլիս՝ մոր հետ միասին ապրելու համար, քանի որ նրա որդին մոր միակ նեցուկն է՝ գոյատևման միջոցներ ձեռք բերելու համար:

Տեղեկացնելով վերը նշվածի մասին Ոստիկանության Դեպարտամենտի համապատասխան բաժնին՝ պատիվ ունեն նշելու, որ թե իմ կողմից և թե հավասարապես Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետի և թե Զաքաթալայի օկրուգի պետի կողմից արգելքներ չեն առաջադրվում Շուրա Դոստակովայի խնդրանքի բավարարման կապակցությամբ, որը լիովին արժանի է հարգանքի:

Նահանգապետ, գեներալ-մայոր (ստորագրությունն անընթեռնելի է)³⁹:

37 Ռուսաստանի Դաշնության պետական արխիվ, ֆ.102, 3-րդ գործավարություն, 1889 թ. ցուցակ, գործ. 1289, թ. 5:

38 Նույն տեղում, թ. 6:

39 Նույն տեղում, թ. 7:

ԹԻՎ 58

29 մայիսի 1886 թ.
N 2079

Թիֆլիսի Պարոն նահանգապետին

ԱՐՆԻՎ

Ի պատասխան այս մայիսի 9-ի N 110 գրության՝ Ոստիկանության Դեպարտամենտը պատիվ ունի տեղեկացնելու Ձերդ Գերազանցությանը, որ Մինիստրի օգնականի՝ Ոստիկանության պետի որոշմամբ Շուշիի քաղաքացու այրի Շուրա Աղաբեկի Դոստակովայի խնդրանքը՝ թույլատրել Ջաքաթալա քաղաքում ոստիկանության բացահայտ վերահսկողության տակ գտնվող իր որդուն՝ Աբրամ Դոստակովին տեղափոխվել Թիֆլիս, Նորին Գերազանցությունը բարեհաճեց հրամայել, որ այդ խնդրանքը ենթակա չէ բավարարման:

Տնօրենին փոխարինող (ստորագրությունն անընթեռնելի է)⁴⁰:

ԹԻՎ 59

Ջաքաթալայի քաղաքային
ոստիկանական վարչություն
25 հոկտեմբերի 1886 թ.

Ոստիկանության Դեպարտամենտին
Ներքին գործերի Նախարարություն

Ջեկույց

Որպես լրացում իմ տեղեկատվության, որը շարադրված էր ընթացիկ տարվա սեպտեմբերի 20-ի N 1914 գեկույցում, ներկայացնելով Ջաքաթալա քաղաքում ոստիկանության բացահայտ վերահսկողության տակ գտնվող վաճառականի որդի Աբրամ Դոստակովի խնդրանքը, պատիվ ունեմ խոնարհաբար խնդրելու Դեպարտամենտին կարգադրություն անել նշված անձնավորությանը առաջիկա 1887 թվականին նշանակել սահմանված աջակցություն ու նպաստ՝ գոյատևման և հագուստի, սպիտակեղենի ու կոշիկի ձեռքբերման նպատակով:

Այս միջնորդությունը հիմնավորված է նրանով, որ Դոստակովը մինչև հիմա բնակվում էր իր քրոջ մոտ, որի միջոցները բավարար չեն, իսկ ներկայումս նա ստիպված է տեղափոխվել հատուկ բնակարան՝ իր ծերացած մոր հետ, բացարձակապես չունենալով գոյատևելու միջոցներ՝ Ջաքաթալա քաղաքում զբաղմունքի և աշխատավարձի բացակայության պատճառով, որոնք թույլ կտային տրամադրել անհրաժեշտ միջոցներ, ընդ որում Դոստակովը աչքի է ընկնում հոյակապ վարքագծով և սովոր լինելով աշխատանքի, չի կարող հասնել ցանկալի նպատակին:

Այնուհետև հարկավոր է հաշվի առնել, որ Դոստակովը գտնվում է ծայրահեղ աղքատ վիճակում, առ այսօր որևէ նպաստ չստանալու պատճառով և ընկել է զգալի պարտքերի մեջ, խոնարհաբար խնդրում եմ ամենամսյա աջակցությունից զատ նշանակել նաև միանվագ նպաստ:

Ընդ որում, պատիվ ունեմ գեկույցելու, որ տեղեկությունները, որոնք պահանջվում են Ներքին գործերի նախարարության 1882 թ. փետրվարի 20-ի N 7 շրջաբերականով, չեն տրամադրվում, քանի որ այդ շրջաբերականը չի ստացվել ինձ վստահված վարչությունում:

Օկրուգի պետ, գնդապետ (ստորագրությունն անընթեռնելի է)⁴¹:

ԺԱ (ԺԷ) փարի, թիվ 1 (65), հունվար-մարտ, 2019

ՎԷՎ համահայկական հանդես

40 Նույն տեղում, թ. 8:
41 Նույն տեղում, թթ. 9-10:

ԹԻՎ 60

N 4729
21 հոկտեմբերի

Նորին բարեձնություն Ջաքաթալայի օկրուգի պարոն պետին
Ոստիկանության բացահայտ վերահսկողության տակ գտնվող
Աբրամ Նիկիտի Դոստակովից

Խնդրագիր

1884 թ. նոյեմբերի 16-ից Պետերբուրգում ընդգրկվելով հետաքննության մեջ քաղաքական հանցագործության մեղադրանքով՝ ես, 1886 թ. հունվարի 22-ի Բարձրագույն կարգադրությամբ ենթարկվել եմ ոստիկանության բացահայտ վերահսկողության երեք տարի ժամկետով Ջաքաթալա քաղաքում, որտեղ գտնվում եմ նույն 1886 թ. փետրվարի վերջերից:

Ջաքաթալայում գտնվելու սկզբնական շրջանում ես բնակվում էի իմ քրոջ ընտանիքի հետ, որը մի կերպ պահում է ինքն իրեն: Այժմ ես հարկադրված բնակվում եմ առանձին բնակարանում, ծերացած, հիվանդ մորս հետ և չունենալով գոյատևման համար որևէ միջոց, ես խոնարհաբար խնդրում եմ Ձերո Բարեձնությանը, կարգադրություն անել ինձ տրամադրելու քաղաքական հսկողության տակ գտնվողների համար նախատեսված ամենամսյա պետական նպաստը: Բացի այդ, Ջաքաթալայում իմ ապրելու ժամանակ, հատկապես երբ քրոջս մոտից տեղափոխվեցի հատուկ բնակարան, ես չունենալով գոյատևման համար որևէ միջոց, ծայրահեղ անհրաժեշտության պատճառով ընկա պարտքերի տակ: Այդ պատճառով էլ խոնարհաբար խնդրում եմ Ձերո Բարեձնությանը, ամենամսյա նպաստին զուգահեռ ինձ տալ թեկուզ ամսական նպաստին համարժեք նվազագույն գումար՝ Ջաքաթալայում ոստիկանության բացահայտ վերահսկողության տակ գտնվելու ժամանակահատվածի չափով:

Ա. Դոստակով⁴²

ԹԻՎ 61

Ջաքաթալայի օկրուգի
քաղաքային ոստիկանության
Վարչություն
19 մարտի 1889 թ. N 121
ք. Ջաքաթալա

Ոստիկանության Դեպարտամենտ,
Ներքին գործերի նախարարություն

Զեկույց

Ի պատասխան Ոստիկանության Դեպարտամենտի Թիֆլիսի նահանգապետին ուղղված անցած՝ 1886 թվականի փետրվարի 8-ի N 542 գրության՝ պատիվ ունեմ զեկույցելու, որ ինձ ենթակա Ջաքաթալայի քաղաքային ոստիկանության բացահայտ վերահսկողության տակ գտնվող վաճառականի որդի Աբրամ Դոստակովը, ժամկետի ավարտից հետո, ըստ Ներքին գործերի նախարարության 1882 թ. ապրիլի 16-ի N 35 կարգադրության 39-րդ կետի ներկայումս ազատվել է բացահայտ վերահսկողությունից և համաձայն Ոստիկանության Դեպարտամենտի շրջաբերական-հրահանգի 4-րդ հատորի վերաբերյալ նույն թվականի փետրվարի 13-ի N 1109 շրջաբերականի՝ մնացել է Ջաքաթալա քաղաքում ժամանակավոր բնակվելու համար: Ընդ որում՝ պատիվ ունեմ զեկույցելու, որ Դոստակովը, գտնվելով ոստիկանության հսկողության տակ, իրեն լավ է դրսևորել և որևէ դատապարտելի քայլ չի արել:

Օկրուգի պետ գնդապետ Իզմայլով⁴³

⁴² Նույն տեղում, թ. 11:

⁴³ Նույն տեղում, թ. 21:

ԹԻՎ 62

Ըստ Բաքվի նահանգային ժանդարմական վարչության պետի 1901 թ. օգոստոսի 26-ի N 1596 գրության ոստիկանության գաղտնի վերահսկողության տակ գտնվող Աբրամ Նիկիտի Դոստակովը մեկնել է արտասահման Փոլսահանգապետի կողմից տրված անձնագրով:

7 օգոստոսի 1901 թ. N 39⁴⁴:

ԹԻՎ 63

Ըստ Դեպարտամենտի 1903 թ. մարտի 22-ի N 4652 շրջաբերական – կարգադրության վաճառականի որդի Աբրամ Նիկիտինի Դոստակովի (Դոստակյանի) նկատմամբ գաղտնի վերահսկողությունը դադարեցված է:

Տես գ. թ. 693

1903 թ.⁴⁵:

ԹԻՎ 64

1902 թ. հուլիսի 1-ից մինչև 1903 թ. հունվարի 1-ը դիտարկման ընթացքում ստացված

Տեղեկություններ

Ազգանուն, անուն, հայրանուն և կոչումը	Բնակության վայրը և զբաղմունքը	Հաշվետու ժամանակամիջոցում ստացված տեղեկություններ
Աբրամ Նիկիտի Դոստակով (Դոստակյանց), վաճառականի որդի	Բաքու, նավթարդյունաբերողների համագումարի խորհրդի գրասենյակի կառավարիչ	Նշված ժամանակահատվածում նրա քաղաքական բարեհուսության վերաբերյալ անբարենպաստ տվյալներ չկան

Բաքվի նահանգային ժանդարմական վարչություն⁴⁶

ԹԻՎ 65

1902 թ. հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը դիտարկման ժամանակ ստացված Տեղեկություններ

Ազգանուն, անուն, հայրանուն և կոչումը	Բնակության վայրը և զբաղմունքը	Նշված ժամանակահատվածում ստացված տեղեկություններ
Աբրամ Նիկիտի Դոստակով (Դոստակյանց), վաճառականի որդի	Բաքու, նավթարդյունաբերողների համագումարի խորհրդի գրասենյակի կառավարիչ	Նկատի ունենալով առանց որևէ հասցեի Բաքու ժամանած՝ Ոստիկանության Դեպարտամենտի կողմից խուզարկության ենթակա Նիկոլայ Ֆլերովի այցելությունը՝ Դոստակովը ենթարկվեց խուզարկության, ընդ որում որևէ վարկաբեկող քան չհայտնաբերվեց

Բաքվի նահանգային ժանդարմական վարչություն⁴⁷

44 Նույն տեղում, թ. 24:
 45 Նույն տեղում, թ. 25:
 46 Նույն տեղում, թ. 26:
 47 Նույն տեղում, թ. 27:

ԹԻՎ 66

1902 թ. հուլիսի 1-ից մինչև հունվարի 1-ը դիտարկման ժամանակ ստացված Տեղեկություններ

Ազգանուն, անուն, հայրանուն և կոչումը	Բնակության վայրը և զբաղմունքը	Նշված ժամանակահատվածում ստացված տեղեկություններ
Աբրամ Նիկիտի Դոստակով (Դոստակյանց), վաճառականի որդի	Բաքու, նավթարդյունաբերողների համագումարի խորհրդի գրասենյակի կառավարիչ	Նույնիս 15-ին կարճ ժամկետով մեկնեց Կիսլովոդսկ, որտեղ նույն բնակարանում ապրում էր վերահսկողության տակ գտնվող Բոդանի հետ: Այնուհետև օգոստոսի 9-ին մեկնեց արտասահման հիվանդությունը բուժելու նպատակով՝ Բաքվի փոխնահանգապետի կողմից տրված անձնագրով:

Բաքվի նահանգային ժանդարնական վարչություն⁴⁸

ԹԻՎ 67

1901 թ. հուլիսի 1-ից մինչև հուլիսի 1-ը դիտարկման ժամանակ ստացված Տեղեկություններ

Ազգանուն, անուն, հայրանուն և կոչումը	Բնակության վայրը և զբաղմունքը	Նշված ժամանակահատվածում ստացված տեղեկություններ
Աբրամ Նիկիտի Դոստակով (Դոստակյանց), վաճառականի որդի	Բաքու, նավթարդյունաբերողների համագումարի խորհրդի գրասենյակի կառավարիչ	Նշված էտապում նրա քաղաքական բարեհուսության վերաբերյալ վարկաբեկող տվյալներ չկան: Ծանոթություն է հաստատել վերահսկողության տակ գտնվող Բոդանի, ինչպես նաև տեղացի հայերի հետ:

Բաքվի նահանգային ժանդարնական վարչություն⁴⁹

ԹԻՎ 68

1900 թ. հուլիսի 1-ից մինչև 1901 թ. հունվարի 1-ը դիտարկման ժամանակ ստացված

Տեղեկություններ

Ազգանուն, անուն, հայրանուն և կոչումը	Բնակության վայրը և զբաղմունքը	Նշված ժամանակահատվածում ստացված տեղեկություններ
Աբրամ Նիկիտի Դոստակով (Դոստակյանց), վաճառականի որդի	Բաքու, նավթարդյունաբերողների համագումարի խորհրդի գրասենյակի կառավարիչ	Նշված էտապում նրա քաղաքական բարեհուսության վերաբերյալ վարկաբեկող տվյալներ չկան: Ծանոթների շրջանակը մտավորականություն է:

Բաքվի նահանգային ժանդարնական վարչություն⁵⁰

48 Նույն տեղում, թ. 28:
49 Նույն տեղում, թ. 29:
50 Նույն տեղում, թ. 30:

ԹԻՎ 69

1900 թ. հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը դիտարկման ժամանակ ստացված Տեղեկություններ

ԱՐՆԻՎ

Ազգանուն, անուն, հայրանուն և կոչումը	բնակության վայրը և զբաղմունքը	Նշված ժամանակահատվածում ստացված տեղեկություններ
Աբրամ Նիկիտի Դոստակով (Դոստակյանց), վաճառականի որդի	Բաքու, նավթարդյունաբերողների համագումարի խորհրդի գրասենյակի կառավարիչ	Նշված էտապում նրա քաղաքական բարեհուսության վերաբերյալ վարկաբեկող տվյալներ չկան: Ծանոթների շրջանակը մտավորականությունն է:

Բաքվի նահանգային ժանդարմական վարչություն⁵¹

ԹԻՎ 70

1899 թ. հուլիսի 1-ից մինչև 1900 թ. հունվարի 1-ը դիտարկման ժամանակ ստացված

Տեղեկություններ

Ազգանուն, անուն, հայրանուն և կոչումը	բնակության վայրը և զբաղմունքը	Նշված ժամանակահատվածում ստացված տեղեկություններ
Աբրամ Նիկիտի Դոստակով (Դոստակյանց), վաճառականի որդի	Բաքու, նավթարդյունաբերողների համագումարի խորհրդի գրասենյակի կառավարիչ	Օգոստոսի 8-ին մեկնեց Բորժոմի՝ իր ընտանիքի մոտ, որտեղից վերադարձավ սեպտեմբերի 10-ին: Քաղաքական որևէ գործի մեջ չի խառնվել:

Բաքվի նահանգային ժանդարմական վարչություն⁵²

ԹԻՎ 71

1899 թ. հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը դիտարկման ժամանակ ստացված Տեղեկություններ

Ազգանուն, անուն, հայրանուն և կոչումը	բնակության վայրը և զբաղմունքը	Նշված ժամանակահատվածում ստացված տեղեկություններ
Աբրամ Նիկիտի Դոստակով (Դոստակյանց), վաճառականի որդի	Բաքու, նավթարդյունաբերողների համագումարի խորհրդի գրասենյակի կառավարիչ	Բացառապես զբաղված է իր պարտականություններով: Նշված էտապում որևէ դատապարտելի պահվածքով աչքի չի ընկել:

Բաքվի նահանգային ժանդարմական վարչություն⁵³

ՌԻՍԻՎ, 2019 թ. հունվար-մարտ, 2019 թ. հունվար 1 (65), հունվար-թիվ 1 (65), հունվար-թիվ 1 (65), հունվար-թիվ 1 (65)

ՎԷՎ համահայկական հանդես

51 Նույն տեղում, թ. 31:
52 Նույն տեղում, թ. 32:
53 Նույն տեղում, թ. 33:

ԹԻՎ 72

1898 թ. հուլիսի 1-ից մինչև 1899 թ. հունվարի 1-ը դիտարկման ժամանակ ստացված

Տեղեկություններ

Ազգանուն, անուն, հայրանուն և կոչումը	Բնակության վայրը և զբաղմունքը	Նշված ժամանակահատվածում ստացված տեղեկություններ
Աբրամ Նիկիտի Դոստակով (Դոստոևսկանց), վաճառականի որդի	Բաքու, նավթարդյունաբերողների համագումարի խորհրդի գրասենյակի կառավարիչ	Նավթարդյունաբերողների համագումարի խորհրդի գործերով օգոստոսին մեկնեց Գրոզնի և այնտեղից էլ Թիֆլիսի նահանգ՝ Բելի Կյուչ ամառանոց ընտանիքի մոտ: Վերադարձավ սեպտեմբերի 7-ին: Քաղաքական առումով հուսայի է:

Բաքվի նահանգային ժանդարմական վարչություն⁵⁴

ԹԻՎ 82

1898 թ. հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը դիտարկման ժամանակ ստացված Տեղեկություններ

Ազգանուն, անուն, հայրանուն և կոչումը	Բնակության վայրը և զբաղմունքը	Նշված ժամանակահատվածում ստացված տեղեկություններ
Աբրամ Նիկիտի Դոստակով (Դոստոևսկանց), վաճառականի որդի	Բաքու, նավթարդյունաբերողների համագումարի խորհրդի գրասենյակի կառավարիչ	Ծանոթություն է հաստատել հսկողության տակ գտնվող Լյուբաշևիչի, Սերբբյակովի, Վվեդենսկու և Իստոմինի, բժիշկ Վիչլենցովի և դոկտոր Արդուտինսկու հետ: Փետրվարի 5-ից 13-ը գործուն մասնակցություն ունեցավ Հայոց Կաթողիկոսի ընդունելությանը: Իր զբաղեցրած դիրքով միշտ գտնվում է բարձր հասարակության մեջ: Ամեն օր այցելում է ակումբ, ծխում է և թուղթ է խաղում: Դատելով նրա վարքագծից, հազիվ թե կարելի է նրան կասկածել քաղաքական անբարեհուսության մեջ:

Բաքվի նահանգային ժանդարմական վարչություն⁵⁵

Մկրտիչ Գ. Դանիելյան– զբաղվում է 1870–1880–ական թվականների նարողնիկական շարժման, հայ ազգային նարողնիկության և ազգային կուսակցությունների պատմության հիմնահարցերով:

⁵⁴ Նույն տեղում, թ. 34:

⁵⁵ Նույն տեղում, թ. 35:

THE ARMENIAN NARODNIKS AND NATIONAL-NARODNIK ORGANIZATIONS OF 1880-1890s

Part two: New-found Ratifications about the Revolutionary Activity of Abraham Dastakyan

Mkrtich D. Danielyan

Key words – “Narodnaya Volya”, “Union of Patriots”, Abraham Dastakyan, Shushi, Tiflis, Christopher Mikaelyan, the Center of ARF, funeral of Grigor Artsruni, culprit, punitive measure, confidential police control.

The package of the given documents referring to the activity of the Armenian narodniks and national-narodnic organization of 70-80s of the 19th century passes rich information about the member of first governing body, i.e. Center or Central Board of ARF Abraham Dastakyan.

Still in early 1880s A. Dastakyan and his friends, including Chr. Mikaelyan conducted “parallel activities” in Tiflis both among the revolutionary Russian narodniks, as well as, Armenian national-narodnik organizations. In 1883 A. Dastakyan left for Moscow and took active participation in the works of the organization of “Narodnaya Volya” and the center of “Youth Union”. On November 16, 1884 A. Dastakyan was arrested for being the member of this organization and was released on September 11, 1885. Afterwards on January 22, 1886 due to the highest order he for three years underwent an open police control in Chakatala, that is, in the place of his mother’s residence. On January 22, 1889 after the expiration of the term A. Dastakyan got milder punishment: he appeared under the confidential police control and was forbidden to live in capitals and in the province of Petersburg. However, even under the control of the police A. Dastakyan continued his active political operations. He alongside with Hovh. Loru-Melikyan, Simon Zavaryan and other figures affiliated to the left-wing of the organization of “Young Armenia” founded in 1889. And in 1890, in the period of Founding meetings of ARF, Dastakyan was elected as the member of its Central Board or Center.

The given published ratifications referring to the revolutionary activity of A. Dastakyan are preserved in the state archive of Russian Federation located in Moscow, in the fund 102 and are for the first time put in the scientific circulation.

АРМЯНСКИЕ НАРОДНИКИ И НАЦИОНАЛЬНО-НАРОДНИЧЕСКИЕ ОРГАНИЗАЦИИ 1880-1890-ЫХ ГГ.

Часть вторая. Новообнаруженные документы о
революционной деятельности Абраама Дастакяна

Мкртич Д. Даниелян

Ключевые слова – «Народная воля», «Союз патриотов», Абраам Дастакян, Шуши, Тифлис, Христофор Микаэлян, Центр АРФ Дашнакцутюн, похороны Григора Арцруни, обвиняемый, санкция, полицейский надзор.

Данный пакет документов, относящихся к деятельности армянских народников и национально-народнических организаций 70-80-ых годов 19-го века, передает богатые сведения о революционной деятельности члена первого руководящего органа АРФ Дашнакцутюн – Центра, или Центрального правления – Абраама Дастакяна.

Еще в начале 1880-ых А. Дастакян и его товарищи, в том числе Х. Микаэлян, развернули в Тифлисе «параллельную деятельность» как в рядах русского революционного народничества, так и внутри армянских национально-народнических организаций. Поехав в Москву в 1883 году, А. Дастакян активно участвует в работе центра ««Союза молодежи» партии «Народная воля»». За членство в этой организации 16-го ноября 1884 г. А. Дастакян арестовывается и выпускается на свободу 11-го сентября 1885 г. Затем, 22-го января 1886 г., он на три года подвергается гласному полицейскому надзору в Закатале – в месте проживания матери. По истечении срока 22-го января 1889 года он удаляется более мягкому наказанию – негласному полицейскому надзору, и ему запрещается жить в столицах и Петербургской губернии. Однако даже в условиях нахождения под полицейским надзором, А. Дастакян продолжал свою активную политическую деятельность. Вместе с О. Лорис-Меликяном, Симоном Заваряном и другими деятелями он примкнул к левому крылу основанной в 1889 г. организации «Молодая Армения». А в период Учредительных собраний АРФ Дашнакцутюн 1890 г. Дастакян был избран членом его Центрального правления, или Центра.

Публикуемые документы о революционной деятельности А. Дастакяна хранятся в Государственном архиве Российской Федерации (Москва), в 102-ом фонде, и впервые вводятся в научный оборот.

REFERENCES

1. Dejateli revoljucionngo dvizhenija v Rossii. Bio-bibliograficheskij slovar', t. 3, vyp. 2, M. 1934, s. 1225-1226 **(in Russian)**.
2. **Miqayelean Qr.**, Bekorner im yush'eric, "Hayreniq" amsagir, Post'an, 1924, N10, ej 57 **(in Armenian)**.
3. Rusastani Dash'nut'yan petakan arxiv, f. 102, 3-rd, 7-rd gorc'avarut'yun, cucak 1883 t', 1884 t.', gorc' 688, 1225 **(in Armenian)**.
4. **Xudinyan G.**, H.Y. Dash'nake'ut'yan qnnakan patmut'yun (akunqneric minch'ev' 1895 t'vakani vergerə), Ye'r., 2006, ej 102 **(in Armenian)**.

ԱՐԽԻՎ

ԺԱ (ԺԷ) քառի, թիվ 1 (65), հունվար-մարտ, 2019

ՎԼՎ համահայկական հանդես